ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 45

29 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԻՔԱԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով էջմիածին քաղաքի Պիոներական փողոցի թիվ 50 տան տան բնակիչ Միքաել Սարիբեկի Եղիազարյանի դիմումը պարզվել է, որ.

- Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 24.11.2008թ. տրված թիվ 7587 և 7588 սեղանամատյաններով գրանցված սեփականության իրավունքի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից 12.10.2017թ. տրված թիվ 6616 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, էջմիածին քաղաքի Պիոներական փողոցի թիվ 50 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Միքաել Սարիբեկի Եղիազարյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասը կազմում է 1179քմ, որից.
- օրինական հողամասը կազմում է 885քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- ավել օգտագործվում է 294քմ սահմանազատված հողամաս,
- ընդհանուր օգտագործման հողամաս 44քմ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Պիոներական փողոցի թիվ 50 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 294քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել Միքաել Սարիբեկի Եղիազարյանի /ծնված 19.02.1955թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 76

30 նոյեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 «ԳԱՐՈՒՆ», ԹԻՎ 6 «ԱՐԵՎԻԿ» ԹԻՎ 15 «ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ Ե. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 42-րդ կետերի պահանջներով, էջմիածին քաղաքի ավագանու 12.10.2017թ. թիվ 72 որոշմամբ ընդունված կարգով և հիմք ընդունելով 2017թ. նոյեմբերի 29-ի թիվ 9 նիստի թիվ 80 որոշումը «2018թ. էջմիածին քաղաքային համայնքի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում ուսման վարձերի գծով արտոնությունների մասին» և թիվ 81 որոշումը «2018թ. էջմիածին քաղաքային համայնքի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ -մանկապարտեզներում երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների», «Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում ուսման վարձերի գծով արտոնությունների մասին», ինչպես նաև հաշվի առնելով էջմիածնի քաղաքապետարանի Ընդհանուր, սոցիալական և առողջապահության բաժնի ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել էջմիածին քաղաքային համայնքի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ, գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների խնամքի և ուսման վարձի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող երեխաների ցանկը՝ համաձայն Կրթության և մշակույթի բաժնի պետի կողմից 25.10.2018թ. զեկուցագրին կից ցուցակով ներկայացված թվով 5 երեխաների վերաբերյալ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4/7

02 հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 3/4 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի, Բաղրամյան փող. 1փակ. 14 հասցեում գրանցված <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

<<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ն (հաշվառված՝ ք. Էջմիածին, Բաղրամյան փող. 1փակ. 14 հասցեում /պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 38.110.01472/2003-10-15 ՀՎՀՀ 04717051) հանդիսանալով Էջմիածին քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության և հողամասի սեփականատեր՝ <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն գույքահարկ ու հողի հարկ վճարող սուբյեկտ, խախտելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 14.08.2018թ. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2018 թվականի հոկտեմբերի 10-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2018 թվականի առաջին կիսամյակի գույքահարկի և հողի հարկի հաշվարկները, չնայած Էջմիածնի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 14.08.2018թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 22.08.2018թ. AG010177550AM/:

• Հանձնաժողովի՝ 17.10.2018թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 4 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2. 01.07.2016թ. հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներ, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 12-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2018 թվականի հոկտեմբերի 10-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 հոկտեմբերի 17-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 02.10.2018թ.-ի փոստային հավաստագիր AG011697256AM/ <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի, հողի հարկի, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <u>հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:</u>

Տվյալ պարագայում <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ-ի կողմից Էջմիածնի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի և հողի հարկի հաշվետվություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 13-րդ հոդվածի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՎԱՐԴ-ՔՆԱՐ>> ՍՊԸ -ից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, որպես հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք, որից 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի գույքահարկի հաշվարկի տուգանք և 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի հողի հարկի հաշվարկի տուգանք:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 418

02 Հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 3/1 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի, Հ.Ավետիսյան փող. թիվ 46ա հասցեում գրանցված <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

<<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ն (հաշվառված՝ ք. Էջմիածին, Հ. Ավետիսյան փող. թիվ 46ա հասցեում /պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 38.110,01583/2005-06-10, ՀՎՀՀ՝ 04718371) հանդիսանալով Էջմիածին քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության և հողամասի սեփականատեր՝ <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն գույքահարկ ու հողի հարկ վճարող սուբյեկտ, խախտելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 14.08.2018թ. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2018 թվականի հոկտեմբերի 2-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչակա ն վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

• <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2018 թվականի առաջին կիսամյակի գույքահարկի և հողի հարկի հաշվարկները, չնայած Էջմիածնի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 14.08.2018թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 17.08.2018թ. AG010184683AM/:

• Հանձնաժողովի՝ 17.10.2018թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2. 01.07.2016թ. հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներ, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 12-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2018 թվականի հոկտեմբերի 02-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 հոկտեմբերի 17-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 02.10.2018թ.-ի փոստային հավաստագիր AG011697199AM/<<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, **չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը** վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ **20 000 /քսան հազար/** ՀՀ դրամ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի, հողի հարկի, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <u>հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:</u>

Տվյալ պարագայում <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ-ի կողմից Էջմիածնի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի և հողի հարկի հաշվետվություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 13-րդ հոդվածի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԿՈՆՍԵՐ>> ՍՊԸ -ից հոգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, որպես հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք, որից 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի գույքահարկի հաշվարկի տուգանք և 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի հողի հարկի հաշվարկի տուգանք:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 49

02 2018թ. ք. Էջմիածին

ՀԱՇՎԱՐԿԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 3/2 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի, Չարենց փող. 9/20հասցեում գրանցված <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ի կողմից գույքահարկի կիսամյակային հաշվարկը տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

<<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ն (հաշվառված՝ ք. Էջմիածին, Չարենց փող. 9/20 հասցեում /պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 99.110.973936/2017-09-12, ՀՎՀՀ 04426926) հանդիսանալով Էջմիածին քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության և հողամասի սեփականատեր՝ <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն գույքահարկ վճարող սուբյեկտ, խախտելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի կիսամյակային հաշվարկը, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 14.08.2018թ. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2018 թվականի հոկտեմբերի 2-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2018 թվականի առաջին կիսամյակի գույքահարկի հաշվարկը, չնայած Էջմիածնի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 14.08.2018թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 20.08.2018թ. AG010177965AM/:
- Հանձնաժողովի՝ 17.10.2018թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 2 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2018 թվականի հոկտեմբերի 2-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 հոկտեմբերի 17-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 02.10.2018թ.-ի փոստային հավաստագիր AG011697260AM/ <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, **չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը** վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ **20 000 /քսան հազար/ ՀՀ** դրամ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի, հողի հարկի, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <u>հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում</u>

<u>չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:</u>

Տվյալ պարագայում <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ-ի կողմից Էջմիածնի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի և հողի հարկի հաշվետվություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՄԱՆՉ 045>> ՍՊԸ -ից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը, որպես 2018թ. –ի առաջին կիսամյակի գույքահարկի հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 220

02 Հոկտեմբեր 2018թ. ք. Էջմիածին

ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 3/3 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի, Ուսուբ Բեկ Թեմուրյանց փող. թիվ 66ա հասցեում գրանցված <<Վահան Տրանս>> ԲԲԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

<<Վահան Տրանս>> ԲԲԸ-ն (հաշվառված՝ ք. Էջմիածին, Ուսուբ Բեկ Թեմուրյանց փող. թիվ 66ա հասցեում /պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 99.130.01029/1997-12-18, ՀՎՀՀ՝ 04702966) հանդիսանալով Էջմիածին քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության և հողամասի սեփականատեր՝ <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն գույքահարկ ու հողի հարկ վճարող սուբյեկտ, խախտելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 14.08.2018թ. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2018 թվականի հոկտեմբերի 2-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում <<Վահան Տրանս>> ԲԲԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

• <<Վահան Տրանս>> ԲԲԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2018 թվականի առաջին կիսամյակի գույքահարկի և հողի հարկի հաշվարկները, չնայած Էջմիածնի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 14.08.2018թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 17.08.2018թ. AG010177577AM/:

• Հանձնաժողովի՝ 17.10.2018թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 3 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<Վահան Տրանս>> ԲԲԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2. 01.07.2016թ. հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<Վահան Տրանս>> ԲԲԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներ, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 12-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2018 թվականի հոկտեմբերի 02-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 հոկտեմբերի 17-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 02.10.2018թ.-ի փոստային հավաստագիր AG011697273AM/<<Վահան Տրանս>> ԲԲԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից <<Վահան Տրանս>> ԲԲԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի, հողի հարկի, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <u>հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:</u>

Տվյալ պարագայում <<Վահան Տրանս>> ԲԲԸ-ի կողմից Էջմիածնի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի և հողի հարկի հաշվետվություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 13-րդ հոդվածի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Վահան Տրանս>> ԲԲԸ -ից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, որպես հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք, որից 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի գույքահարկի հաշվարկի տուգանք և 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի հողի հարկի հաշվարկի տուգանք:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 721

02 հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 3/5 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի, Ալավերդյան 61Ա հասցեում գրանցված <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

<<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ն (հաշվառված՝ ք. Էջմիածին, Ալավերդյան 61Ա հասցեում /պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 38.110.00970/1997-05-16 ՀՎՀՀ՝ 04709552) հանդիսանալով Էջմիածին քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության և հողամասի սեփականատեր՝ <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն գույքահարկ ու հողի հարկ վճարող սուբյեկտ, խախտելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 14.08.2018թ. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2018 թվականի հոկտեմբերի 10-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2018 թվականի առաջին կիսամյակի գույքահարկի և հողի հարկի հաշվարկները, չնայած Էջմիածնի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 14.08.2018թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 22.08.2018թ. AG010177563AM/:

• Հանձնաժողովի՝ 17.10.2018թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2. 01.07.2016թ. հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ն Էջմիածին համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներ, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 12-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2018 թվականի հոկտեմբերի 10-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 հոկտեմբերի 17-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 02.10.2018թ.-ի փոստային հավաստագիր AG011697225AM/ <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի, հողի հարկի, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <u>հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:</u>

Տվյալ պարագայում <<ՎԱՐԴ>> ՍՊԸ-ի կողմից Էջմիածնի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի և հողի հարկի հաշվետվություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 13-րդ հոդվածի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՎԱՐԴ>> ՍՊԸ -ից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, որպես հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տույժ, որից 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի գույքահարկի հաշվարկի տուգանք և 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2018թ. –ի առաջին կիսամյակի հողի հարկի հաշվարկի տուգանք:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄԹԻՎ 222

03 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 27.09.2018Թ. ԹԻՎ 608 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 27.09.2018թ. «ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող հանրակացարանի հողատարածքի սահմանների վերականգման և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 608 որոշման մեջ կատարել փոփոխություն.

. Որոշման առաջին կետում նշված «0,06467 հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ « 0,06352 հա մակերեսով» բառերը :

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 723

03 դեկտեմբերի 2018թ.Ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՈՒՇԵՂ ՍԵԴՐԱԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մուշեղ Սեդրակի Բադալյանի լիազորված անձ՝ Կարեն Գարեգինի Մաչանյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 29.12.1997թ. տրված թիվ 1-6050 սեղանամատյանով գրանցված բնակելի տան առուծախի պայմանագրի, էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 59 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Մուշեղ Սեդրակի Բադալյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 480քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 58քմ սահմանազատված հողամաս, վերջինիս վրա նույնպես կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ ևս չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 59 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 58քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Մուշեղ Սեդրակի Բադալյանի /ծնված 20.06.1947թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ Ք. Էջմիածին, Անդրանիկ թիվ 2-րդ թաղամաս թիվ 59/1:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 724

03 Հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Սամվել Հարությունյանին և Արծվիկ Ղազարյանին պատկանող բնակելի տանը /հիմք՝վկայական 2409416/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Թելման փողոց թիվ 3/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 725

03 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈՂՈՍ ԵՐՎԱՆԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 126 տան բնակիչ Պողոս Երվանդի Մանուկյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 23.01.1992թ. տրված կիսակառույց բնակելի տան առուծախի պայմանագիրը/, էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 126 հասցեում գտնվող 403քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը և դրան կից կառուցված բնակելի նշանակության՝ օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 126 հասցեում գտնվող 403քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը և դրան կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Պողոս Երվանդի Մանուկյանի /ծնված 22.04.1957թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ